Գ.3

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՁԲ-11/ 32 2017

ք.Երևան «19» 01 2017թ.

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ «Ապահովագիր»), ի դեմս տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, մի կողմից, և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «Ապահովագրող»), ի դեմս գործադիր տնօրեն Ա. Մելիքսեթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

ԲԱԺԻՆ 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով «Ապահովագրողը» պարտավորվում է ապահովագրել /այսուհետ՝ Ծառայություն/ «Ապահովագրի»՝ սույն պայմանագրի «Բաժին 2»-ում նշված՝ սահմանված կարգով հայտարարագրված տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ «Տրանսպորտային միջոցներ» կամ ՏՄ), իսկ «Ապահովագիրը» պարտավորվում է սույն պայմանագրի «Բաժին 2»-ով սահմանված կարգով «Ապահովագրողին» տրամադրել ապահովագրման ենթակա տրանսպորտային միջոցների ապահովագրման համար անհրաժեշտ տվյալները և փաստաթղթերը:

1.2. «Ապահովագրողն» իրականացնում է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և «Ապահովագրողի»՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանների (հաստատված «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 18 փետրվարի 2016 թվականի թիվ 1-Լ որոշմամբ, գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19 հոկտեմբերի 2016 թվականին:

1.3. Կողմերը համաձայնում են, որ սույն պայմանագրում օգտագործված եզրույթներն (հասկացություններն) ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և «Ապահովագրողի»՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմաններով (հաստատված «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 18 փետրվարի 2016 թվականի թիվ 1-Լ որոշմամբ, գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 19 հոկտեմբերի 2016 թվականին) սահմանված նշանակությունը:

1.4. Սույն պայմանագրի համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի ապահովագրության պայմաններ են հանդիսանում սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ը՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանները:

1.5. Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրը կնքելը կողմերի միջև 2017թ-ի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

1.6 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

ԲԱԺԻՆ 2. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Սույն պայմանագրի համաձայն ապահովագրվում է սեփականության իրավունքով «Ապահովագրին» պատկանող թվով 571 (հինգ հարյուր յոթանասունմեկ) տրանսպորտային միջոցների («անհամանափակ թվով վարորդներ պայմանով») օգտագործումից բխող պատասխանատվությունը՝ սահմանված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքով: Սույն դրույթը չի արգելում Կողմերին փոխադարձ համաձայնությամբ փոփոխել և/կամ լրացնել սույն պայմանագրի համաձայն ապահովագրման ենթակա ՏՄ-երի ցանկը: Համաձայն Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո ԻՍՄ կողմից հաստատված RL 1-001 Կանոնների (ԱՊՊՆ հիմնարար պայմանները)՝ 2016թ. սեպտեմբերի 1-ից սկսած ԱՊՊՆ պայմանագրերը կնքվում են միայն անհամանափակ վարորդների տարբերակով:

2.2. Սույն պայմանագրի համաձայն յուրաքանչյուր ՏՄ-ի ապահովագրման համար «Ապահովագիրը» սույն պայմանագրի ստորագրումից հետո առավելագույնը 20 աշխատանքային օրվա ընթացքում «Ապահովագրողին» է տրամադրում սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տվյալները և փաստաթղթերը: Տվյալները և փաստաթղթերը «Ապահովագրողին» տրամադրվում են առձեռն՝ «Ապահովագրողի»՝ սույն պայմանագրում սահմանված հասցեով և/կամ «Ապահովագրողի» մասնաճյուղ և/կամ «Ապահովագրողի» լիազորված ներկայացուցչին ներկայացնելու միջոցով:

2.3. Կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի 2.2 կետով նախատեսված տվյալների և փաստաթղթերի տրամադրումը կարող է իրականացվել էլեկտրոնային փոստի և/կամ ֆաքսիմիլային կապի միջոցներով: Այս դեպքում տվյալների և փաստաթղթերի տրամադրման ժամկետ է համարվում դրանց ստացման և դրանց ամբողջականության վերաբերյալ «Ապահովագրողի» կողմից «Ապահովագրին» տրված ծանուցման ժամկետը:

2.4. «Ապահովագրողը» «Ապահովագրի» կողմից ներկայացված՝ սույն պայմանագրի 2.2 [illegible] նախատեսված տվյալների և փաստաթղթերի իսկության և [illegible] պատասխանատվություն չի կրում: «Ապահովագրողն» [illegible] պահանջել և ստանալ լրացուցիչ տվյալներ՝ սույն

պայմանագրի «Բաժին 1»-ում նախատեսված իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որոնք անհրաժեշտ են սույն պայմանագրով նախատեսված ՏՄ-երի ապահովագրման համար:

2.5. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կողմերը համաձայնում են, որ սույն պայմանագրով նախատեսված ՏՄ-երի գծով ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքի և «Ապահովագրողի՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանների (հաստատված «Հայաստանի ավտոապահովագրողների խումբ» ԻԱՄ խորհրդի 18/02/2016թ. թիվ 1-Ի. որոշմամբ (փոփոխված 25/07/2016թ. թիվ 27-Ա. որոշմամբ, 26/09/2016թ. թիվ 37-Ա. որոշմամբ), գրանցված ՀՀ կենտրոնական բանկի կողմից 19 հոկտեմբերի 2016 թվականին) դրույթների, պահանջների և ընթացակարգերի համաձայն:

3.2. Սույն պայմանագրի համաձայն ապահովագրվող յուրաքանչյուր ՏՄ-ի համար ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարները, ապահովագրական պատահարները և դրանց բացառությունները, հատուցվող վնասները և դրանց բացառությունները, վնասների կարգավորման գործընթացը (ներառյալ՝ ապահովագրական հատուցման վճարման ընթացակարգը), չհատուցվող գումարը, Կողմերի այլ իրավունքներն ու պարտականությունները, ապահովագրության դադարեցման և/կամ ապահովագրության էական պայմանների փոփոխման կարգը սահմանվում են սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ով:

3.3. Սույն պայմանագրով սահմանված կարգով կնքվող ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) գործողության ժամկետը սահմանվում է որպես կանոն 2017 թ. հունվարի 1 ի ժ. 0:00-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը ժ. 23:59, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան ապահովագրության պայմանագրով (վկայագրով):

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

4.1. Սույն պայմանագրի համաձայն ապահովագրվող յուրաքանչյուր ՏՄ-ի գծով ապահովագրավճարը հաշվարկվում է՝ համաձայն ավտոտրանսպորտային միջոցների գործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության

ղորտում «Ապահովագրողի» կողմից կիրառվող ապահովագրավճարների սանդղակի, ելնելով «Ապահովագրի», յուրաքանչյուր ապահովագրվող ՏՄ-ի և յուրաքանչյուր ապահովագրված անձի (լիազորված տնօրինողի) ռիսկայնության աստիճանից: Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում «Ապահովագրողի» կողմից կիրառվող ապահովագրավճարների սանդղակը բերված է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում:

4.2. Կողմերը համաձայնում են, որ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ոլորտում «Ապահովագրողի» կողմից կիրառվող ապահովագրավճարների սանդղակը գործող է սույն պայմանագրի կնքման պահի դրությամբ, սակայն կարող է փոխվել հետագայում «Ապահովագրողի» կողմից: Սույն կետով նախատեսված ցանկացած փոփոխության դեպքում՝ այդ փոփոխության օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու պահից, այդ փոփոխությունը համարվում է կատարված նաև սույն պայմանագրի Հավելված 1-ում:

4.3. «Ապահովագրողը» պարտավորվում է «Ապահովագրին» տեղեկացնել ապահովագրավճարների, ինչպես նաև ապահովագրության պայմանների ցանկացած փոփոխության մասին նախապես՝ մինչև դրանց օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելը:

4.4. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ ուշ, քան մինչև 2017 թվականի մարտի 30-ը, «Ապահովագիրն» «Ապահովագրողի» օգտին կատարում է ապահովագրավճարների գծով սկզբնական վճարում՝ սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված բոլոր ՏՄ-երի համար ընդամենը 22,000,000 (քսաներկու միլիոն) ՀՀ դրամ:

4.5. Սույն պայմանագրի 2.2 կետում սահմանված փաստաթղթերի և տվյալների ստացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, «Ապահովագրողը» կատարում է ապահովագրավճարների փաստացի հաշվարկ և այդ մասին գրավոր տեղեկացնում «Ապահովագրին»:

4.6. Սույն պայմանագրի 4.5 կետում նշված հաշվարկի արդյունքում ստացված՝ փաստացի ապահովագրավճարների ընդհանուր մեծության և սույն պայմանագրի 4.4 կետում սահմանված գումարի միջև դրական տարբերություն առաջանալու դեպքում այդ տարբերությունը ենթակա է վճարման «Ապահովագրի» կողմից՝ սույն պայմանագրի 4.5 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4.7. Սույն պայմանագրի 4.5 կետում նշված հաշվարկի արդյունքում ստացված՝ փաստացի ապահովագրավճարների ընդհանուր մեծության և սույն պայմանագրի 4.4 կետում սահմանված գումարի միջև բացասական տարբերություն առաջանալու դեպքում այդ տարբերությունը ենթակա է վերադարձման «Ապահովագրողի» կողմից՝ սույն պայմանագրի 4.5 կետում սահմանված ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ԲԱԺԻՆ 5. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրով նախատեսվող հարցերը Կողմերի միջև կարգավորվում են ՀՀ քաղաքացիական [illegible] «Ապահովագրության և ապահովագրական գործունեության [illegible] օրենքով, «Ավտոտրանսպորտային միջոցների

օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական այլ ակտերով:

5.2. Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատական կարգով:

5.3. Սույն պայմանագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Ապահովագրողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.4. կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Ապահովագրողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5. Սույն պայմանագրի 5.3. և 5.4. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Ապահովագրողին վճարման ենթակա գումարներից:

5.6. Ապահովագիրի կողմից սույն պայմանագրի 4.4. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Ապահովագիրի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.7. Տույժերի և /կամ/ տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունների լրիվ կատարելուց:

ԲԱԺԻՆ 6. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

6.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետում նախատեսված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

ԲԱԺԻՆ 7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի մինչև սույն կետով սահմանված ժամկետի ավարտը միակողմանիորեն հրաժարվել պայմանագրից՝ այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:

7.2. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել (լրացվել, երկարաձգվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7.3. Սույն պայմանագրի բոլոր հավելվածները, փոփոխություններն ու լրացումները կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.4. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և /կամ/ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Ապահովագրողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր /տեղեկություններ և տվյալներ/, կամ Ապահովագրողին հաղթող ճանաչելու /ընտրելու/ մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Ապահովադիրը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Ապահովադիրը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Ապահովագրողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Ապահովագրողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Ապահովադրի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Ապահովադիրի ստացածով:

7.5. Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Ապահովադրի մոտ գոյություն ունենա գնման առարկայի օգտագործման պահանջը.

Սույն պայմանագրին կցվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ: Սույն պայմանագրի N1 հավելվածը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ծանուցումն ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ԲԱԺԻՆ 7. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ապահովագրող»	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Գտնվելու վայրը՝	ՀՀ, Երևան 0010, Տպագրիչների 8
ՀՎՀՀ՝	02535733
Հ/Հ՝	1930028134290100 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Լիցենզիա՝	ԱՊՈ 0005(0014)
Հեռախոս՝	374 10 543134, 374 10 543135
Ֆաքս՝	374 10 547506

«Ապահովադիր»	ՀՀ ԱԱԾ
Գտնվելու վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՎՀՀ՝	01507079
Հ/Հ՝	900011301067
	ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հեռախոս՝	374 10 562628
Ֆաքս՝	374 10 562628

«Ապահովագրող»

Գործադիր տնօրեն՝ Ա. Մելիքսեթյան
(պաշտոն, անուն, ազգանուն)

Կ.Տ. (ստորագրություն)

«Ապահովադիր»

Տնօրենի տեղակալ՝ Ա. Հակոբյան
(պաշտոն, անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Հավելված 1

Սույն խմբագրությամբ կանոնները գործում են 19.11.2016 թվականից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի 18/02/2016թ թիվ 1-Լ որոշմամբ

Փոփոխված է 25/07/2016թ թիվ 27-Լ, որոշմամբ
26/09/2016թ թիվ 37-Լ, որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

_____ Նելսոն Օրիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«19» հոկտեմբերի 2016թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-001

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊՈՒ ՀԻՄՆԱՐՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ)

ԵՐԵՎԱՆ - 2016

ԲԱԺԻՆ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1.

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Բյուրոյի www.paap.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները ներառող սույն կանոնները և Բյուրոյի այլ կանոնները (այսուհետ նաև՝ Պայմաններ) և ԱՊՊԱԼ վկայագիրը (այսուհետ նաև՝ Վկայագիր) միասին կազմում են ԱՊՊԱԼ պայմանագիրը:

2. ԱՊՊԱԼ պայմանագրի առարկա հանդիսացող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), այլ իրավական ակտերով, Վկայագրով և Պայմաններով: Ընդ որում, այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունների համար Պայմաններով նախատեսված են Օրենքով սահմանվածից առավել խիստ պայմաններ՝ նեղացնող որոշակի գործողությունների իրականացման առավել կարճ ժամկետներ, ապա ապահովագրական ընկերություններն այդ մասով առաջնորդվում են Պայմաններով:

3. ԱՊՊԱԼ պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) Բյուրո՝ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) ապահովագրական ընկերություն՝ Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերություն,

3) Ապահովագրող՝ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրած ապահովագրական ընկերություն,

4) Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ տվյալ ԱՊՊԱԼ պայմանագիրը կնքած անձ,

5) ապահովագրված անձ՝ Ավտոտրանսպորտային միջոցի տեփականատեր կամ տվյալ ապահովագրանան պատահարի ժամանակ այն օրինական հիմքով տիրապետած այլ անձ,

6) տուժող՝ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով Օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որն Օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրված կարգով ունի հատուցման իրավունք: Տուժող են համարվում նաև սույն ենթակետի առաջին նախադասությամբ նախատեսված՝ անձի մահվան դեպքում Օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք,

7) Ավտոտրանսպորտային միջոց՝ տվյալ ԱՊՊԱԼ պայմանագրի Վկայագրում կամ դրա հավելվածում նշված հատարանիշին կամ սույն կանոններով նախատեսված դեպքերում նույնացման համարին կամ կամ թափքի համարին՝ ԱՊՊԱԼ պայմանագրի կնքման պահին պետական հաշվառում իրականացնող մարմնի և (կամ) արտադրողի տվյալներով հանդիսացող ավտոտրանսպորտային միջոց (միջոցներ),

4. ԱՊՊԱԼ պայմանագրում օգտագործվող այլ հասկացություններն ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և Օրենքում նշանակությունը, եթե կոնկրետ դրույթի բովանդակությունից չի բխում դրա օգտագործման այլ իմաստ:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

5. ԱՊՊԱ պայմանագրի կողմեր են համարվում Վկայագրի համապատասխան դաշտերում նշված Ապահովագրողը և Ապահովադիրը: Պայմանների և Վկայագրի դրույթներն ու պահանջները պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի համար: Այն դեպքում, երբ Ապահովադիրն Ավտոտրանսպորտային միջոցը վարման է հանձնում այլ անձի, ապա Ապահովադիրը պարտավոր է վերջիններիս տեղեկացնել Պայմաններով նախատեսված պարտավորությունների անվերապահ կատարման մասին: Հակառակ դեպքում այդ պարտավորությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

6. ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (ապահովագրված անձի) այն գույքային շահերը, որոնք կապված են Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից ծխող Ապահովադրի (ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Ավտոտրանսպորտային միջոցի սպառազինումից տուժողին կամ նրա գույքին պատճառված Օրենքով և Պայմաններով սահմանված վնասների գծով:

ԳԼՈՒԽ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

7. Ապահովագրողը պարտավոր է Պայմաններով նախատեսված բոլոր ծանուցումները Պայմաններով նախատեսված անձանց ուղարկել իրավասու էլեկտրոնային փոստի հասցեով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ծանուցում ստացողը երբևէ ԱՊՊԱ պայմանագիր չի կնքել (ապահովադիր չի հանդիսացել) կամ վերջին ԱՊՊԱ պայմանագիրը կնքված է եղել մինչև էլեկտրոնային փոստը որպես վկայագրի պարտադիր լրացման դաշտ սահմանելը և դրանում նշված չի եղել էլեկտրոնային փոստի հասցե: Սույն կանոնների իմաստով իրավասու էլեկտրոնային փոստի հասցե է համարվում՝

1) Ապահովադրի և Ապահովագրված անձի համար՝ Վկայագրում նշված էլեկտրոնային հասցեն, իսկ Վկայագրի կնքումից հետո Ապահովադրի կողմից Ապահովագրողին այլ էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ վերջին անգամ տրամադրված էլեկտրոնային հասցեն,

2) Տուժողի և նրա իրավահաջորդի համար՝ նրանց կողմից վերջին անգամ որևէ ապահովագրական ընկերության հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված էլեկտրոնային հասցեն, իսկ կոնկրետ դեպքի հատուցման գործընթացում տուժողի (նրա իրավահաջորդի) կողմից ծանուցման համար այլ էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ միայն տվյալ գործընթացի շրջանակներում՝ այդ էլեկտրոնային հասցեն:

8. Սույն կանոնների 7-րդ կետով սահմանված բացառություն համարվող դեպքերի համար որպես ծանուցման եղանակ կարող է համարվել՝